



# ԲԱՐՁՐԱՎԼԵՊ

Ե. ՏԱՐԻ. ԹԻՒ 3.

1849

ՓԵՏՐՈՒԱՐԻ 4.

## ԲԱՐՁՐԱՎԼԵՊ

ԱԶԳԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ազգին յարուակ է իրեռութեան առաջն պէտք է աղջային ըլլայ :

Որովհետեւ գեւ ազգերնուս մէջ կրթութիւնն լաւ ծաւալած չէ, և 'ի հարկէ լաւ կրթողներն ալ շատ չեն, թերեւս ոմանց լաւ երենայ օտարազգեաց ձեռքն յանձնելիրենց ու մեր ազգին յոյն ու յաջորդներն : Այս բանիս մեզին անպատշաճ երենան ցուցընելէն առաջ, պէտք է զանազաննք դաստիարակութիւնն գիտութենէն . գիտութիւնն ինչպէս լեզուներ, բնաբանութիւն, մեքենականութիւն, և այլն, զմարդ կրթեալ չեն ըներ . կրթութինն է շտկութիւն ընդհանուր և առանձին մարդկային բնութեան կրից և մտաց, որուն կը հետեւի մտաց զարգացմունքն աւ որ կ'ըլլայ պէսպէս գիտութեամբք : Դիտութեանց համար չենք հակառակիր թէ օտարաց մէջ կրնանք գտնել

մեզի լաւ վարպետներ . բայց թէ այն օտարքն կարող ըլլան լաւ գաստիարակել զմերայինս առաւելքան զմերայինս՝ մեզի ընդունելի չերենար :

Ովկ' կ'ընդունի որ Դաշղիացին ըզմուսն կրթէ, Ոտուսն զԳերմանացին, Գերմանացին զլատալացին, Խտալացին զԴաշղիացին կամ զՎնդղիացին : Ու ոք խելացի ընդունիր . և ընդունելուն զիսաւոր պատճառն, ինչ որ ըսեն, ասէ՝ որ ամէն ազգ զանազան բնաւորութիւն և աղջային ոգի մը ունի, և ինչպէս զանազան լեզու ունեցողք զանազան բացատրութիւն ունին, գրեթէ այսպէս ալ զանազան կերպ ունին ըմբըրունման և մտածման . ասովէ այն արևելքի և արևեմուտքի մեծ զանազանութիւնն, ասովլ իւրաքանչիւր ազգաց թէ

կրթեալև թէ անկիրթ իրարմէ տարբեր ախորժակներն , սովորութիւններն , բարքերն . և ինչպէս մտածմունքնին տարբեր է , այսպէս ալ մտածմունքն հաղորդելու և ըմբռնելու կերպն , թող զսէրն որ նմանեաց մէջ աւելի կ'ազդէ . քանի որ այս զանազանութիւնս կայ՝ օտարի կրթութիւնն կամքիչ կամ ոչ ինչ կը յաջողի , կամ կրթուողն իր ազգային ոգին կը կորաշնցընէ : Իսկ արդ թէ որ այն վերոյիշեալ ազգերն որ մէջերնին աւելի նման են իրարու քան թէ մեզի , չեն կրնար մէկմէկու կրթիչ ըլլալ , ինչպէս կրնան հայկազանց կրթող ըլլալ . միթէ մեր ազգին խորանշան կերպարանաց զանազանութեան չափ չկայ մեր և անոնց ոգւոյն մէջ ալ զանազանութիւն մը . միթէ հայերն ամէն բան կորսընցընելով իրենց ազգային ոգին ալ բոլորովին կորուսե՞ր են , որն որ անկարելի է կորսընցընել քանի որ կայ ազգային լեզու , ազգային աւանդութիւն , ազգային ծէս , և արեւելեան զարգացմունք մը :

Պիտի ըսեն թէ այն յիշուած ազգերն կիրթ ազգեր ըլլալով մէկմէկու կարօտ չեն , մենք անկիրթ ենք , անոր համար կ'ուզենք անոնցմէ կրթիչ առնուլ : (Ծաղ այս ալ ըսեն , թէ հապա այն ազգերն ինչպէս կրթուեցան , իրենք զիրենք կրթեցին , թէ կարգաւ մէկն զմէկալն կրթեց , կամ թէ մէկ մը ելաւ ու գնաց զամէնքն կրթեց : Կայինք որ բարերար ազգն էր որ ելաւ բոլոր լյուսպան կրթեց , և ինչու մէկէն չկըրթեց . վասն զի գիտենք որ խոտալցի մը , Կաղղիացի մը , Խնդիրացի մը , Կերմանացի մը , Ուուս մը՝ նոյն ատեն կրթուած չեն : Իսկ թէ մէկն զմէկալն կրթեց , ցուցընեն թէ ինչ զարմանալի կարգաւ եղաւ այս բանս , կարելի է մենք ալ իմանանք մեր ազգին կարգն : Իսկ չէ թէ որ այն ազգերն իրենք զիրենք կրթեր են մէջերնէն ելած խելացիներու ձեռքով , կամ համօրէն ջանքով , և ուրիշներէն լցու ու օրինակ առնելով . կարծեմ շատ աւելի գիւրին է որ հիմայ կարենան իրենք զիրենք կըր-

թէլ հայերն ալ , որոնց մէջ կրթութիւնն 4000 տարուընէ առաջ մտածէ , և ոչ երբէք բոլոր ազգով բարբարութեան վիճակ ունեցեր են , քան թէ այն եւրոպական ազգերն՝ որոնցմէ բաց յիտալացւոց ամենէն հին կրթութեան սկիզբն ունեցողն ալ 1400 տարի չկընար համրել , շատերն ասոր կէս թիւն ալ :

Դմոնմանք վերի ըրած զանազանութիւնիս , թէ այլ է կրթութիւն և այլ գիտութիւնք . ամէն տեղ տղոց դաստիարակ մը և դպրատան ուղղիչ մը կը պահանջուի որ տգէտ ըլլայ , բայց ոչ երբէք անկէ կը պահանջուի որ գիտնայ այն ուսմունքներն որն որ առանձին վարժապետք կը սորվեցընեն . և գրեթէ միշտ երևելի և բարեկարգ դպրոցաց անուանի ուղղիչներ զովուեր են իրենց բարեկիրթ և ազքարաց ըլլալուն համար , խիստ քիչ կայ որ գիտուն ըլլանուն համար : (Ծակ որ մեր մէջ ալ խել մը ատենէ վեր գիտուն մարդիկ պակսեր են , երբ պակսեր են աչքարաց , ձարպիկ , հանձարեղ ու զգաստ մարդիկ՝ որ թէ արևելք թէ արևելուտք զանազան տէրութեանց անանկ ծառայութիւններ ըրեր են և կ'ընեն , անանկ գործարանաց և ընկերանոցաց վերակացու եղեր են , անանկ մեծ գործքեր առաջ տարեր են , որոնց խիստ շատ անգամ միայն իրենք յարմար գլունուեր են , թէ իրենց պէս հապատակ ազգաց մէջէն և թէ իրենց իշխողաց մէջ ալ : (Ծակ որ իրենց շահուն համար հայերն ասանկ վարպետութիւններ ցըսուցեր են մեծ գովութեամք , հիմայ իրենց զաւկըներն կրթեն պին շահէրէն վար կը սեպեն : Հայերն ( պարծենալու համար չէ նէ՝ արդարութեան համար ըսենք ) անոնք որ շատ դարերէ վեր բոլոր արևելքի մէջ զրեթէ առաջնն բարեկիրթ և ձարտար ազգն ըլլալէն զատ , շատ լյուսպացւոց ալ մեծամեծ ձարտարութեանց ձամբայ բացեր են , հիմայ պիտի չկարենան իրենց տղոց կրթութեան վրայ աչք ունենալ , և օտար ձեռքերու թողուլ :

Չենք ըսեր որ ամէն ազգային ալ վե-

բազմասելի է քան զօտարն, հասլա կը հաւատանք որ բնութեամբ զգաստ մարդ մը իր կէս գիտութեամբն ալ միշտ առաւել է քան զշատդէտ օտարն կը թութեամն հոգուն մէջ, վասն զի ունի ան համեմատ գիտութիւն մը ազգային ոգոյ և սիրոյ. որն որ անկարելի է որ օտար մը ունենայ: ։ ։ ատ մեծ և անսովոր նախախնամութիւն մը պիտի ըլլայ՝ որ գտնուի օտար մը որ բողը ջանք ու հոգն զնէ զայերն կը թելու. և սակայն թէ որ գտնուի ալ, միթէ այն մարդն աւելի ջանք պիտի չընէ՞ որ նախինքն կը թուի հայակրթութեան մէջ, երկայն քննութեամբ ճանչնայ մեր բընաւորութիւնն, զննէ մեր երակներն, և զմեզ իրեն չյարմարցուցած՝ զինքն մեզի յարմարցընէ. իսկ արդ որն է դիւրին, անոր զմեզ ճանչնան ու մեզի յարմարին, թէ խոհական և ազգասեր հայու մը անոր կը թութեան կերպերն առնուլն, անոնց լաւ դպրոցաց ոճն դիտեն, և ըստ այնմ ինքն ալ իր ազգին դպրոցին վնոյնն յարմարցընէն. Երբ տեսեր ենք որ Երբոպացի մը հայու կերպ առած ըլլայ, բայց շատ շատ հայ տեսեր ենք որ անոր կերպերն կատարեալ նմանցուցեր է. Երբ տեսեր ենք այն բարակ մարդիկներէն մէկն որ յետ երկար տարիներու վարժմանց ալ կարենայ հայու հայերէն մը խօսիլ, բայց շատ հայ կը ճանչնանք որ իրենց հատութեամբն ալ քանի մը տարուան մէջ նման անոնց լեզուն ալխօսեր են և գիրք ալշարազիեր են: ։ ։ քդ թէ որ մերոնք այս յարմարութիւնս ունին, նախ պէտք է յուսալ որ շուտով կընան առնուլ լաւ կը թութեան կերպերն և մտցընելիրենց մէջ. Երկրորդ վախնալ որ ըլլայ թէ օտարաց կը թել տալով իրենց տղաքն՝ այն օտարներուն բնութիւններն ու բարքն առնուն և իրենց ազգութիւննին աւրել տան: ( ։ գտակար կը թութիւնն պէտք է առնուլ պատուաստի պէս մեր բնութեան վրայ, չէ թէ մեր բնութիւնն անոր վրայ պատուաստել. ինչ պէս կ'ըսէր մէկն՝ որ կովէն ալ պատուաստ կ'ընդունիմ, բայց յանձն չեմ

առնուը երակներուս մէջ առիւծի արիւնն ալ: ։ ։ կը եմ ազգերնուս յատուկ կը թութիւն տուողն ըլլայ ազգային, օտարներն մեզի կերպեր ցուցընեն. անոնք մեզի լցու տան, բայց հայու ձեռքն ըլլայ ջահակիրն. գժուարին ալեաց մէջ մեզի ծովացոյց ըլլան, բաց նաւապետն մեզնէ ըլլայ:

Պահնք օրինակի, և մեզմէ առնունք օրինակն ալ: ։ ։ զգերնուս մասնաւոր կը թութիւնն առջի անգամ սկսած է ասկէ 1550 տարի առաջ, 'ի ձեռն մեր հոգւոց և մտաց անմահ ։ ։ ուսաւորչին և իրեն գործակից Մէծ Տրդատին. այն ատեն ազգերնիս շատ աւելի անկիրթ և նախապաշարեալ էր թանձր սովորութեամբք և խոր խաւարի մէջ. անհրաժարելի պարտք էր որ դրսէն մարդ բերուի զայն կը թելու կամ մերոնցմէ դուրս զրկելու. նայինք ինչ ըրին մեր ։ ։ ուսաւորիչքն. նախ թէ պէտ և գիտեին ։ ։ զունաց առաւելութիւնն և անոնցմէ ալ վարպետներ առին, բայց աւելի ։ ։ սորիներէն բերին. ինչու որ ազգերնուս բնութիւնն աւելի նման էր ասոնց: ։ ։ յրկրորդ՝ ոչ այնչափ դուրս զրկեցին հայ մանկտին, որչափ դրսէն վարպետ բերին. և ներքին կը թութեան ինքնին ։ ։ յրիգոր և Տրդատ ։ ։ ուսաւորիչք հոգ կ'ընէին դպրոցներուն այցելութեամբ, ինչպէս կ'իմանանք ։ ։ գալթանգեղոսէն որ ականատես էր: ։ ։ յրորդ՝ ամենէն առաջ քրմերուն տըզաքն սկսան կը թել որոնք հայոց ոգւոյն գրեթէ աւանդապահքն էին, և զանոնք եկեղեցական պաշտօնի ալ հացընելով հոգաբարձու դրին մնացածներուն կը թութեանն. և աս բանս լաւ կը յայտնեն իրենց թղթովն որ գրեցին քանի մը եպիսկոպոսներու հրաւիրելով զանոնք ալ 'ի հայաստան, ։ ։ Օի, ։ ։ գեռ մանկունք երկրիս 'ի դալրոց են, ։ ։ և ոչ 'ի նոցանէ բաւականա քանի հանայութեան, . ըսել է որ առջի տարիներն գրուեցաւ աս թուղթս. և ահա մաքերնին զրեր էին՝ որ մէկ մ'օր այն տղաքն կարող ընեն վարպետութեան՝ ալ դրսէն շատ կարօտու-

թիւն պիտի ցունենային : — Ի սոնց նը-  
ման ըրաւ երկրորդ լուսաւորիչ մ'ալ  
Ո' եծն՝ Ա, երսէս հայրապետն, Հայաս-  
տանի մէջ հազարաւոր դպրոցներ բա-  
ցաւ իր ազգն կրթելու աւելի իր եպիս-  
կոպոսաց ձեռքով քան օտարաց : Պէտք  
է խոստովանինք որ թէ Կրիդորի և թէ  
Կ, երսիսի ջանքն յաջողապէս առաջ չգր-  
նաց . բայց ինչո՞ւ . մէկ մ'որ երկուքին  
ալ մեռնելէն կամ քաշուելէն վերջն՝  
Հայաստան քաղաքական խոռվութեց  
և ոտքի տակ ընկաւ , ամէն բան տակն  
ու վրայ եղաւ , նախարարներն անհոգ ,  
վրանին ալ դեռ կուապաշտութեան շո-  
շորդ կար . մէկ մ'ալ որ ազգային գիր  
չկար , որն որ ազգային կրթութեան  
զարգացնող ջուրն կրնանք ըսել : Ի յս  
պակասութիւնս լեցընելու սահմաներ էր  
Ի սոտւած զլյահակ և զլյեսրոպ :

Ի յս երրորդ լուսաւորիչքս՝ Հայոց  
գիրն հնարելով լեզուին իր բնական  
ձամբան , մեզի ալ Հայոց կրթութեանն՝  
յըցուցին . Հայոց ընտիր տղաքներն  
զրկեցին երևելի քաղքըներ գիտութիւն  
սորվելու , բայց նախ իրենք տուին ա-  
նոնց մարդկային և ազգային կրթու-  
թիւն . քանի որ պիտիկ էին՝ ինքն Հայոց  
Ուսուցապետն Ո' եսրոպ տարաւ զա-  
նոնք Ո' լիտինէ , երբոր անոնցմէ զա-  
տուելու եղաւ՝ տեղն թողուց Ո' եռնդ  
երէյն որ արդէն տարուաք էր . մէկալ  
Ուարգմանիչքն ալ որ վերջն գացին զա-  
նազան կողմեր , ամէնքն ալ նախ Հայա-  
ստանին մէջ կրթուած և չափահաս ան-  
ձինք էին : Ի սոնք դառնալէն վերջն ի-  
րենք պիտի ըլլային Հայոց դաստիա-  
րակներ և վարժապետներ . մեղուի  
պէս ամէն ծաղկէ ժողվելով Հայաստա-  
նի փեթակն պիտի նուին ու Հայու  
մեղը պիտի տային յունական , ասորա-  
կան , քաղդէական ծաղկըներէ : Ո' եծ  
և անմիթար դժբաղդութիւն , որ ի-  
րենց ալ նոյնն պատահեցաւ ինչ որ Կրի-  
դորի և Կ, երսիսի , և սակայն բանն այն-  
պէս ետք չմնաց . Ո' ուամշապուհ չկար ,  
բայց գտնուեցան մէկ Վահակ Բագրա-  
տունի մը , մէկ Վ ահան Ի մատունի մը ,  
մէկ Ո' ամիկոնեան մը , և ուրիշներ ալ

որ ձեռք դրին Ուարգմանչաց . անոնք  
ալ դպրոց բացին , իրենք եղան վար-  
պետ , և ահա այն ատենն էր որ՝ կ'ըսեն  
յետագայ պատմիչք՝ սկսան անոնք բազ-  
մացընել դաս դաս Ճարտասաններ , քեր-  
դողներ , պատմիչներ . և ինչ որ երկայն  
ատեն մեծ մեծ օտար իմաստուններ  
չեին կրցած ընել իրենք ըրին . մէկալ  
ներն չէ թէ միայն աս յաջողութիւն-  
ներս չունեցան , հապա երբեմն արգելք  
ալ կ'ըլլային Հայոցյառաջադիմութեն .  
ինչպէս Պահայ վանքին մէջ որ ամե-  
նէն հին և երևելի վանքն էր Հայոց՝  
Օ ենոք Ի սորին ըլլալով առաջին վե-  
րակեցու , ետևիններն ալ Ի սորի էին ,  
և թէպէտ Վահակ ու Ո' եսրոպ երկըն-  
քէն ալ գիր իջուցին , բայց անոնք յա-  
մառեալ ասորերէնը չմողուցին , ին-  
չուան որ հարիւր տարիէն ալ աւելի  
ետքը Ուողիկ Հայ առաջնորդն անոնց  
դպրութիւնն ալ զիրենք ալ հալածեց  
այն տեղէն : Ի յսպէս է շատ հեղ օ-  
տարաց յիշատակն . կուգան այգիդ մշա-  
կելու , կամաց կամաց իրենք կ'ըլլան  
տէր , ուզածնին կը ցանեն , քեզի ալ  
իրենց ուզածն կը կերցընեն : Ո' եր  
Ուարգմանիչներէն առաջ 200 տարուան  
միջոց Հայերն երևելի հանձնարաւոր  
մարդիկ ունեցեր են , և թէրեւս այն  
Ուարգմանիչներէն ալ վեր , որոնցմէ ո-  
մանք արձանի ալ արժանի եղեր են  
Հոռոմայ և Բիւզանդիոնի մէջ . բայց  
ուր են այս օրուան օրս իրենց փառքն ,  
իրենց գործքերն , իրենց անուններն ալ ,  
որոնցմէ հազիւ մէկ երկուքին լսեր ենք  
այն օտարներէն՝ որոնց որ այն ատեն  
պարծանք եղեր էին մեր Հայերն , իսկ  
այսօր ոչ անոնց պարծանք են և ոչ մե-  
զի , վասն զի չենք ձանցնար , և մեզի  
օգուտ մ'ալ չեն ըրած : Ի յսպէս ալ  
ետևի գարերուն մէջ ինչուան մեր ա-  
տեններն եղեր են Հայոցմէ շատ հը-  
մուտ բժիշկներ , թարգմաններ , դես-  
պաններ թէ յարեւելս և թէ յարե-  
մուտս . ուր են անոնց անուններն Հայա-  
ստանի մէջ , անոնցմէ ումանք կրթեալ  
օտարաց մէջ չէին սորված , և սակայն  
ինչ օգուտ ըրին իրենց ազգին . աւելի

վերադասելի չե՞ն հիմակուան ազգային կրթութեան փոյթ ունեցող վարժապետներն՝ որ թէպէտ և անոնցմէ շատ պակաս են կատարելութեամբ, բայց շատ ալ աւելի օգուտ կ'ընեն զանազան ազգային դպրոցաց մէջ՝ իրենց ազգային հոգւովն :

Դուսանք որ իմացան բարեսէրք՝ թէ մեր միտքն օտարներէ խորշիլ չէ, հապա անոնց չթողուլ մեր զաւակաց մեր յցսերուն կրթութիւնն. իսկ անոնցմէ ուսմանց վարպետ առնուլ, կամ մեր տղաքն անոնց քով դրկել՝ կ'ընդունիք ալ կը յորդորենք ալ. միայն թէ այն ատեն ալ թէ որ ուսանողքն դեռ համը բակ են՝ կը փափագինք որ ազգային ձեռքի տակն ըլլան, և այս բանիս օրինակ կուտան այսօրս մեզինոր կրթուող ազգերն ալ, Յոյնք, ( Կ սմանեանք, Երգիպտացիք, և Եւրոպացւոց մէջ վերջի կրթուած ազգերն :

Հ . Դ . Մ

---

### Բարոյական առաջներ :

ԵՐԲՈՐ մէկը ուրիշներուն կարգ կանոն կը դնէ ու ինք իր վրայ անփոյթ է, դրսուանց աղատ ու ներսէն գերի է :

Ծակ որ երեելի ընկերութեան մը զլուխ ըլլաս, աս գիտցիր որ գլխաւոր մը երբոր կ'ուզէ վայելուչ կերպով իր պաշտօնն ընել, պէտք է ինքը օրինակ ըլլայ՝ աւելի գործքով քան թէ խօսքով :

Ծակ որ գրագէտ չես, գէթ գրագէտները սիրէ, թէ որ գիտուն չես, նայէ որ գիտուններուն պատիւը պահես :

Ծակ որ քաղցրաբարոյ ըլլաս, ու խօսակցութեան մէջ անուշ կերպ բանեցնես, քեզի հետ վարուիլը ամենուն փափաքելի կ'ըլլայ :

Ծակ որ արդարութեան ու հաւատարմութեան անուն հանես, ամէն տեղ վրադ վստահ՝ կ'ըլլան, և ինչ դժուարութիւն որ վրադ գալու ըլլայ՝ քու խօսքդ կը զօրէ :

Ծակ որ ընտանիքէդ անհանգստու-

թիւն մը ունենաս, նայէ որ լրութեամբ անցընես . իսկ թէ որ յանկարծ նշան մըն ալ տալու ըլլաս, զուարթութիւնդ ու համեստութիւնդ մի կորսնցըներ . վասն զի աս տեսակ դիպուածներուն մէջ ասկէց աղէկ ձամբայ չկայ, որով աս ալ կը ցուցընես՝ թէ քեզի անհամոյ եղած այսպիսի բաները և ոչ մտածելու արժանի կը սեպես :

Ծակ որ կիրքերուդ ետևէ ըլլաս, քու առջի թշնամիդ դուն կ'ըլլաս :

Վզգականներդ ու բարեկամներդ անուշ երեսով ընդունէ, ասանկ որ ըննես, գիտցիր որ ամեննեին ընդունիլը աւելի լաւ է :

Ինանկ մարդիկներու վստահ եղիր, որ իրենց արդեամբքը, հանձարովն ու արդարութեամբը երեելի եղած են :

Կայէ որ թէ ստացուածքիդ մէջ թէ կարասեացդ մէջ և թէ խօսակցութեանդ մէջ համեստութիւնդ փայլի միշտ :

Զարաբարոյ մարդը ան ատեն աւելի կը յայտնուի, երբոր զինքը ծածկել կ'ուզէ : Վսկէց խելք սորվէ ու կեղծուպատիր ձևացմունքներու շատ մի վստահիր . անոնք երբ ըլլայ վրայէդ կը վերնան, ու ինչ ըլլալդ յայտնի կ'ընես :

Հարստութիւնը շատ մարդկանց թը շուառութեանը պատճառ եղաւ . ոմանց փափաքով թէ երբ պիտի հարըստնան, ոմանց վախով ըլլայ թէ ունեցածնին կորսընցընեն, երկու կողմն ալ թշուառութիւն է : Բայց ասոնց ետևէն ըլլալը քեզմէ կախուած է :

Վարդո երեելի ընողը՝ ոչ ազնուատոհմութիւնն է ոչ հարստութիւն և ոչ ունեցած մեծամեծ պաշտօնները, հապա զանոնք լաւ կերպով գործածելը :

Ծակ որ թշնամիներդ շահիլ կ'ուզէս, իրենց ծառայելէն ու բարիք ընելէն ետ մի կենար . բայց թէ որ կիրքերդ կատարելուզէս, անոնց գերի կ'ըլլաս :

---